**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ**
**ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 սեպտեմբերի 2021 թվականի N 41-Ա

## 2021 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 09-Ի N 07 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ և 17-րդ հոդվածների, Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է՝***

1. Հաստատել 2021 թվականի սեպտեմբերի 09-ի N 07 արտահերթ նիստի հետևյալ օրակարգը.

1) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող Հանրակացարանային թաղամասի 2-րդ շենքի թիվ 56 բնակարանն անհատույց օտարելու մասին.

2) Աբովյան քաղաքի Նաիրյան փողոցի թիվ 1/50 հասցեում գտնվող հողամասի նպատակային նշանակությունը փոխված համարելու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -8

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՆԻԿՈԼԱՅ
ԺԱՄՀԱՐՅԱՆ ԼԵՎՈՆ
ԲԱԲԱՅԱՆ ՏԻԳՐԱՆ
ՂԱԶԱՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ
ՂԱԼԵՉՅԱՆ ԳՈՌ
ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՆՈՐԱՅՐ
ՉԱՏՅԱՆ ՍԱՐԳԻՍ
ՔՈՍԱԿՅԱՆ ԱՐՄԵՆ

Դեմ -0
Ձեռնպահ -0

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Վ. ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2021թ. սեպտեմբերի 09
ք. Աբովյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 սեպտեմբերի 2021 թվականի N 42-Ա

## ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀԱՆՐԱԿԱՑԱՐԱՆԱՅԻՆ ԹԱՂԱՄԱՍԻ 2-ՐԴ ՇԵՆՔԻ ԹԻՎ 56 ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 594-596-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, հաշվի առնելով Վարդան Մնացյանի դիմումը և Աբովյան համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական աջակցություն ցուցաբերելու գործընթացն ապահովող մշտական հանձնաժողովի 2021 թվականի մայիսի 20-ի եզրակացությունը, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ 2019 թվականի փետրվարի 25-ի N 25022019-07-0067 վկայական) Աբովյան քաղաքի Հանրակացարանային թաղամասի 2-րդ շենքի 13.62 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով թիվ 56 բնակարանն անհատույց օտարել Վարդան Մնացյանին և Նաիրա Մաթևոսյանին:

2. Սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է սույն որոշման 1-ին կետում նշված անձանց կողմից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ -8

| | |
|---|---|
| ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՆԻԿՈԼԱՅ | ՂԱԼԵՉՅԱՆ ԳՈՌ |
| ԺԱՄՀԱՐՅԱՆ ԼԵՎՈՆ | ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՆՈՐԱՅՐ |
| ԲԱԲԱՅԱՆ ՏԻԳՐԱՆ | ՉԱՏՅԱՆ ՍԱՐԳԻՍ |
| ՂԱԶԱՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ | ՔՈՍԱԿՅԱՆ ԱՐՄԵՆ |

Դեմ -0
Ձեռնպահ -0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2021թ. սեպտեմբերի 09
ք. Աբովյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ**
**ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 սեպտեմբերի 2021 թվականի N 43-Ա

## ԱԲՈՎՅԱՆ ՔԱՂԱՔԻ ՆԱԻՐՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 1/50 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽՎԱԾ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի 5-րդ ենթակետի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 26-ի N 1022-Ն և 2007 թվականի օգոստոսի 9-ի N 1036-Ն որոշումների, հաշվի առնելով «ՄՈՒԼՏԻ ԱՎՏՈՏՐԱՆՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրենի դիմումը (մուտք՝ 2021 թվականի սեպտեմբերի 08-ի N S-527), Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է.***

1. «ՄՈՒԼՏԻ ԱՎՏՈՏՐԱՆՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2016 թվականի մարտի 31-ի N 31032016-07-0047 վկայական, կադաստրային համարը՝ 07-002-0086-0031) Աբովյան քաղաքի Նաիրյան փողոցի թիվ 1/50 հասցեում գտնվող 0.1725 հեկտար մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողամասի նպատակային նշանակությունը համարել փոխված որպես բնակավայրերի նշանակության հողամաս:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ -8

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՆԻԿՈԼԱՅ
ԺԱՄՀԱՐՅԱՆ ԼԵՎՈՆ
ԲԱԲԱՅԱՆ ՏԻԳՐԱՆ
ՂԱԶԱՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ
ՂԱԼԵՉՅԱՆ ԳՈՌ
ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՆՈՐԱՅՐ
ՉԱՏՅԱՆ ՍԱՐԳԻՍ
ՔՈՍԱԿՅԱՆ ԱՐՄԵՆ

Դեմ -0
Ձեռնպահ -0

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Վ. ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2021թ. սեպտեմբերի 09
ք. Աբովյան